



8 դեկտեմբերի 2017 թվականի

GrecoRC4(2017)15

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼ

Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների,
դատավորների եւ դատախազների շրջանում

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ
ՀԱՅԱՍՏԱՆ

Ընդունվել է ԳՐԵԿՈ-ի կողմից իր 78-րդ լիագումար նիստում
(Ստրասբուրգ, 2017 թվականի դեկտեմբերի 4-8)

ԳՐԵԿՈ
քարտուղարության
Եվրոպայի խորհրդի
F-67075 Ստրասբուրգ
+33 3 88 41 20 00

www.coe.int/ereco

Մարդու իրավունքների եւ օրենքի
գերակայության հարցերով գլխավոր
տնօրինություն I
Տեղեկատվական հասարակության եւ
հանցագործությունների դեմ պայքարի
հարցերով տնօրինություն

Գ
Ն
Ա
Հ
Ա
Տ
Մ
Ա
Ն
Չ
Ո
Ր
Ր
Ո
Ր
Դ
Փ
ՈՒ
Լ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցում գնահատվում են Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցառումները՝ ուղղված ԳՐԵԿՈ-ի կողմից իր 69-րդ լիազումար նիստում ընդունված՝ Գնահատման չորրորդ փուլի՝ Հայաստանի վերաբերյալ զեկույցում ներկայացված հանձնարարականների կատարմանը (2015 թվականի հոկտեմբերի 16), եւ այն հրապարակվել է 2016 թվականի փետրվարի 25-ին՝ Հայաստանի կողմից թույտվություն ստացվելուց հետո (Greco Eval IV Rep (2015) 1E [ԳՐԵԿՈ-ի գնահատման IV զեկույց (2015) 1E]): ԳՐԵԿՈ-ի գնահատման չորրորդ փուլը վերաբերում է «Պատգամավորների, դատավորների եւ դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելմանը»:
2. Ինչպես պահանջվում է ԳՐԵԿՈ-ի ընթացակարգային կանոններով, Հայաստանի իշխանությունները ներկայացրել են հանձնարարականների կատարմանն ուղղված միջոցների իրականացման իրավիճակի մասին զեկույց: Այս զեկույցը ստացվել է 2017 թվականի ապրիլի 25-ին եւ 2017 թվականի հոկտեմբերի 5-ին եւ 31-ին ներկայացված լրացուցիչ տեղեկությունների հետ հիմք է ծառայել Պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցի համար:
3. Պարտավորությունների կատարման առնչությամբ զեկուցողներ նշանակելու համար ԳՐԵԿՈ-ի կողմից ընտրվել են Վրաստանը եւ Հունգարիան: Վրաստանի կողմից զեկուցող է նշանակվել տկն Գուլիսա ԿԱԽՆԻԱՇՎԻԼԻՆ, իսկ Հունգարիայի կողմից՝ պրն Բալինտ ՎԱՌՌՈՆ: Պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցի մշակման հարցում նրանց օժանդակել է ԳՐԵԿՈ-ի քարտուղարությունը:
4. Պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցում գնահատվում է Գնահատման զեկույցում ներառված յուրաքանչյուր առանձին հանձնարարականի կատարումը, ինչպես նաեւ տրվում է տվյալ անդամի

կողմից այդ հանձնարարականների կատարման մակարդակի ընդհանուր գնահատականը: Կատարման ենթակա (մասամբ կատարված կամ չկատարված) յուրաքանչյուր հանձնարարականի իրականացումը կգնահատվի Պարտավորությունների կատարման վերաբերյալ սույն զեկույցի ընդունումից 18 ամիս հետո իշխանությունների կողմից ներկայացվող՝ Իրավիճակի մասին հետագա զեկույցի հիման վրա:

II. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

5. ԳՐԵԿՈ-ն իր Գնահատման զեկույցում Հայաստանին ներկայացրել է 18 հանձնարարական: Ստորեւ ներկայացվում են տեղեկություններ՝ այդ հանձնարարականների կատարման մասին:
6. Հայաստանի իշխանություններն ընդհանուր առմամբ նշում են, որ Գնահատման զեկույցն ընդունելուց կարճ ժամանակ անց սահմանադրական հանրաքվե է անցկացվել (2015 թվականի դեկտեմբեր): Արդյունքում փոփոխվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, մասնավորապես՝ խորհրդարանական եւ դատական համակարգերի մասով: Հետեւաբար մշակվում են Ազգային ժողովի, դատական իշխանության եւ դատախազության գործունեությունը կարգավորող մի շարք նոր օրենքներ: Արդարադատության նախարարի նախագահությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ՝ օրենքների «Ինստիտուցիոնալ փաթեթը», այդ թվում՝ նոր կանխարգելիչ հակակոռուպցիոն մարմնի վերաբերյալ վերջերս ընդունված օրենքը մշակելու համար:

Պատգամավորների շրջանում կոռուպցիայի կանխարգելումը

Հանձնարարական i.

7. ԳՐԵԿՈ-ն առաջարկել է Ազգային ժողովում ապահովել եւ էլ ավելի բարձրացնել օրենսդրական գործընթացների թափանցիկությունը՝
- i) ապահովելով, որ օրենքի նախագծերի շուրջ հանրային քննարկումների պահանջը գործնականում կատարվի, եւ որ նախագծերը Ազգային ժողով ներկայացվեն, ինչպես նաեւ փոփոխությունները հրապարակվեն ժամանակին, եւ ii) ձեռնարկելով համապատասխան միջոցներ՝ ապահովելու համար, որ հանձնաժողովի նիստերի բովանդակությունը եւ դրա մասնակիցների վերաբերյալ տեղեկությունները հրապարակվեն, ինչպես նաեւ հանձնաժողովներն առավել ակտիվորեն կիրառեն խորհրդարանական լուսններ կազմակերպելու հնարավորությունը:
8. Հայաստանի իշխանությունները հանձնարարականի i մասի առնչությամբ հայտնում են, որ պետական կառավարման մարմիններից վաղուց ի վեր պահանջվել է, որ հանրային քննարկումների համար օրենքի նախագիծը հրապարակեն իրենց կայքերում¹: Ընդհանուր առմամբ, շահագրգիռ կողմերի առաջարկությունները կարող են ներկայացվել հրապարակումից հետո՝ առնվազն 10 օրվա ընթացքում: Ավելին, Կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 1134 որոշման համաձայն՝ «Սահմանադրության կամ օրենքի համաձայն ստեղծված մարմիններից», այդ թվում՝ Ազգային ժողովից այժմ նաեւ պահանջվում է², որ իրենց կողմից մշակվող բոլոր իրավական ակտերի նախագծերը հրապարակեն այդ նպատակով ստեղծված

¹ Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 2-ի N 1134 որոշմամբ փոփոխված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի «Հանրային քննարկումների կազմակերպման եւ իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 296-Ն որոշում

² Ազգային ժողովի պատգամավորների եւ խմբակցությունների կողմից առաջարկված օրենքների նախագծերը քննարկումների համար հրապարակվում են այդ նպատակով ստեղծված միասնական կայքում:

միասնական կայքում՝ e-draft.am³ հանրային քննարկումները հնարավոր դարձնելու համար: Օրենքների նախագծերը (ինչպես նաև որոշումների, հայտարարությունների եւ ուղերձների նախագծերը) դրանք ներկայացնելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, պարտադիր գրանցվում են Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված հարցերի ռեեստրում (հասանելի է Ազգային ժողովի պաշտոնական կայքում): Ազգային ժողովի կողմից քննարկվող բոլոր օրենքների նախագծերը (օրակարգում ընդգրկվածներ, օրակարգում չընդգրկվածներ եւ ամբողջությամբ ընդունվածներ), այդ թվում՝ բոլոր փոփոխությունները հրապարակվում են Ազգային ժողովի պաշտոնական կայքի «Նախագծեր» բաժնում: Իշխանությունները հավելում են, որ հանրային քննարկումները կարող են անցկացվել⁴ նախագիծը մշակող մարմնի նախաձեռնությամբ, հանդիպումների, բաց լսումների, հարցումների, ինչպես նաև հաղորդակցման տարբեր միջոցներով կարծիքների փոխանակման միջոցով:

9. Ինչ վերաբերում է հանձնարարականի *ii* մասին, իշխանությունները նշում են, որ 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված եւ 2017 թվականի մայիսի 18-ին ուժի մեջ մտած «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով (ԿՕ) նախատեսվում են մշտական հանձնաժողովների պարտադիր հրապարակային նիստեր: Որոշ իրավիճակներում (համաներում, պետական բյուջեի կատարում եւ այլն) մշտական հանձնաժողովների նիստերը կարող են անցկացվել միայն դռնփակ: Գործնականում 2016 թվականի աշնանային նստաշրջանում 124 հարցից միայն երեքն են քննարկվել դռնփակ: Իշխանությունները հաստատում են, որ 2017 թվականի հերթական (աշնանային) նստաշրջանում մոտավորապես 100 հարցից միայն մեկն է քննարկվել դռնփակ: ԿՕ-ի (165-րդ հոդվածի 2-րդ մաս) համաձայն՝ մշտական հանձնաժողովների նիստերը, ինչպես նաև խորհրդարանական լսումները պետք է առցանց հեռարձակվեն Ազգային ժողովի պաշտոնական

³ Արդարադատության նախարարությունը համակարգում է այդ հարթակի աշխատանքը, ինչպես նաև իրականացնում է վերահսկողություն:

⁴ Պարտադիր բնույթ չի կրում:

ինտերնետային կայքում: Պետական-իրավական եւ մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նիստերը հեռարձակվել են 2017 թվականի սեպտեմբերից ի վեր: Իշխանությունները նշում են, որ այժմ հեռարձակվում են մշտական բոլոր հանձնաժողովների նիստերը: Նոր ԿՕ-ով, ինչպես նաեւ Ազգային ժողովի աշխատակարգով (ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին) կարգավորվում է խորհրդարանական լուսմների հարցը, ինչպես նաեւ ընդլայնվում է դրանք հրավիրելու իրավասություն ունեցող մարմինների, այդ թվում՝ Ազգային ժողովի նախագահի եւ խմբակցությունների գործունեության շրջանակը: Իշխանությունները նաեւ նշում են, որ Ազգային ժողովի մշտական եւ *ժամանակավոր* հանձնաժողովների կողմից խորհրդարանական լուսմների կազմակերպումը չի կրում պարտադիր բնույթ: 2016 թվականի աշնանային նստաշրջանի ընթացքում խորհրդարանական հանձնաժողովների կողմից անցկացվել է առանձնակի կարեւորություն ունեցող հարցերի վերաբերյալ ինը լուսմ, իսկ 2017 թվականի աշնանային նստաշրջանի ընթացքում՝ 3 խորհրդարանական լուսմ, եւ մինչեւ 2017 թվականի դեկտեմբերի վերջ նախատեսվում է անցկացնել առնվազն 4 լուսմ: Իշխանությունները հավելում են, որ նոր ընտրված Ազգային ժողովն այսպես կոչված «անհետաձգելի կարգով» դեռ քննարկել է միայն մեկ հարց, այն է՝ գործող դատավորների թիվն ավելացնելու հարցը:

10. Ավելին, իշխանությունները հաստատում են, որ Ազգային ժողովի աշխատակարգի 7-րդ պարբերության համաձայն՝ օրակարգերի նախագծերը պետք է հրապարակվեն հերթական նիստից առնվազն երեք աշխատանքային օր առաջ: Հրապարակվում են նաեւ նիստերի արձանագրությունները՝ Ազգային ժողովի նախագահի կողմից ստորագրվելուց հետո:
11. ԳՐԵԿՈ-ն հիշեցնում է, որ տվյալ հանձնարարականի համար պատճառ է հանդիսացել օրենսդրական դաշտի կիրառման հետագա

կատարելագործման անհրաժեշտությունը՝ օրենսդրական գործընթացի թափանցիկությունն ապահովելու, հանրային քննարկումներ անցկացնելու հնարավորություններն ավելացնելու, այսպես կոչվող «անհետաձգելի կարգն» ավելի քիչ կիրառելու, օրենսդրական նախագծերը վաղ փուլում հանրությանը տրամադրելու, հանձնաժողովների հանդիպումների ել լսումների ընթացքում թափանցիկության ավելի բարձր մակարդակ ապահովելու համար եւ այլն: ԳՐԵԿՈ-ն հարկ է համարում նշել, որ օրենսդրական նախագիծը նոր ստեղծված կայքում՝ «e-draft.am», հրապարակելու պարտավորությունը նպատակ ունի ապահովելու օրենսդրական գործընթացի թափանցիկության ավելի բարձր մակարդակ: Ավելին, խորհրդարանում գրանցված օրենքների նախագծերը, ըստ համապատասխան տեղեկությունների, հրապարակվել են խորհրդարանի կայքում, ինչը ցանկացած շահագրգիռ մարմնի (օգտատիրոջ) հնարավորություն է տալիս օրենքների նախագծերի վերաբերյալ մեկնաբանություններ անել: ԳՐԵԿՈ-ն ողջունում է նոր ԿՕ-ն, որով բարելավվել է մշտական հանձնաժողովի նիստերի վերաբերյալ կարգավորումները՝ մասնավորապես հստակեցնելով դռնփակ նիստեր անցկացնելու պայմանները: Բացի, ԳՐԵԿՈ-ն հարկ է համարում նշել, որ ընդլայնվել է խորհրդարանական լսումներ հրավիրելու հնարավորությունը (ԿՕ-ի 125-րդ հոդվածի 3-րդ մաս): Ավելին, իշխանությունները նշել են, որ վերջին տարիներին նվազել են հանձնաժողովների հանդիպումները դռնփակ անցկացնելու դեպքերը: Թեեւ իշխանությունները ձեռնարկել են օրենսդրական գործընթացի թափանցիկության ավելի բարձր մակարդակ ապահովելուն ուղղված մի շարք պատշաճ միջոցներ, սակայն վերանայված իրավական դաշտն ամբողջությամբ նոր է, եւ համակարգը որոշ ժամանակ գործելուց հետո կարիք ունի դրա կիրառման անմիջական փորձի առումով լրացուցիչ կերպով գնահատվելու: Մասնավորապես պետք է նախապատվությունը տալ օրենքների նախագծերը ժամանակին հրապարակելու անմիջական փորձին, օրենքի մշակման գործընթացում

հանրության ներգրավմանը, «անհետաձգելի կարգի» կիրառմանը, հանձնաժողովների նիստերի փաստաթղթերի հրապարակմանը եւ պատշաճ վերահսկողությանը:

12. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ i հանձնարարականը մասամբ է կատարվել:

Հանձնարարական ii.

13. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է՝ i) ընդունել պատգամավորների վարքագծի կանոնագիրք եւ այն հեշտ հասանելի դարձնել հանրության համար, որով հստակ ուղղորդում կապահովվի շահերի բախման եւ հարակից ոլորտներին, մասնավորապես՝ նվերների եւ այլ առավելությունների ընդունմանը, անհամատեղելիության դեպքերին եւ լրացուցիչ գործունեությանը, ֆինանսական շահերին, տեղեկատվության եւ պետական ռեսուրսների ոչ իրավաչափ օգտագործմանը եւ երրորդ կողմերի, օրինակ՝ լրբբիստների հետ շփումներին առնչվող հարցերում, ii) այն լրացնել դրա իրականացման համար անհրաժեշտ գործնական միջոցներով, օրինակ՝ մասնագիտական վերապատրաստում, խորհրդատվություն եւ իրազեկվածության մակարդակի բարձրացում:*
14. Ինչ վերաբերում է հանձնարարականի i մասին, իշխանությունները հայտնում են, որ 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված եւ 2017 թվականի մայիսի 18-ին ուժի մեջ մտած՝ «Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքը (ՊԳԵՕ) պատգամավորների համար մշակված վարքագծի համապարփակ կանոնագիրք է, որը պարունակում է էթիկայի ընդհանուր կանոնները (2-ից 4-րդ հոդվածներ), եւ որով կարգավորվում են անհամատեղելիության եւ շահերի բախման հետ կապված հարցերը: «Հանրային ծառայության մասին» օրենքը (ՀԾՕ) նույնպես պարունակում է հանրային ծառայողների կողմից էթիկայի ընդհանուր կանոնները պահպանելուն առնչվող պահանջներ: Բացի այդ, այն պարունակում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ֆինանսական

վիճակի բացահայտման եւ նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ դրույթներ:

15. Ավելին, իշխանությունները նշում են, որ 2017 թվականի հունիսի 9-ին ընդունված, սակայն դեռ գործողության մեջ չդրված՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում (ԿԿՀՕ) նշվում է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ) ունի բոլոր բարձրաստիճան պաշտոնատար անձանց անհամատեղելիության պահանջների եւ նվերներ ընդունելու սահմանափակումների պահպանմանը հետեւելու հստակ գործառույթ: Էթիկայի կանոնների եւ *իրավիճակային* շահերի բախման կարգավորումը շարունակում է մնալ ապակենտրոնացված: Պատգամավորների դեպքում վերահսկողությունն ապահովվում է Ազգային ժողովի էթիկայի *ժամանակավոր* հանձնաժողովի կողմից:
16. Ինչ վերաբերում է հանձնարարականի ii մասին, իշխանությունները նշում են, որ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ն 2017 թվականի սեպտեմբերի 12-ից ի վեր իրականացրել է «Աջակցություն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին՝ խորհրդարանական վերահսկողությունը եւ ընտրողների հետ հաղորդակցությունը բարելավելու նպատակով» ծրագիրը: Պատգամավորների համար կազմակերպվել է մի քանի միջոցառում (այդ թվում՝ պաշտոնապես պաշտոնի նշանակում, կողմնորոշման նիստեր եւ ռազմավարական պլանավորման արտագնա նիստ)՝ ընդգրկելով, ի թիվս այլ հարցերի, անհամատեղելիության, խորհրդարանական էթիկայի կանոնների եւ շահերի բախման հետ կապված հարցերը: Ծրագիրը մասնավորապես ուղղված է Խորհրդարանի, այդ թվում՝ մշտական հանձնաժողովների եւ խմբակցությունների գործունեության թափանցիկության եւ հաշվետվողականության մակարդակի բարձրացմանը: Պատգամավորների համար պատրաստվել է էթիկայի ընդհանուր սկզբունքները եւ Ազգային ժողովի էթիկայի *ժամանակավոր* հանձնաժողովի մասին տեղեկություններ պարունակող ուղեցույց:

17. ԳՐԵԿՈՒՆ հարկ է համարում նշել, որ իշխանությունները վկայակոչում են մի քանի այնպիսի իրավական ակտեր, որոնցով կարգավորվում են իրավական եւ էթիկայի դաշտի համար կարեւոր մի շարք այնպիսի հարցեր, որոնց պետք է հետեւեն պատգամավորները եւ հանրային պաշտոն զբաղեցնող այլ անձինք: Մասնավորապես ԳՐԵԿՈՒՆ ողջունում է ՊԳԵՕ-ի ընդունման փաստը, որով կարգավորվում են էթիկայի ընդհանուր սկզբունքները, անհամատեղելիության դեպքերը, լրացուցիչ գործունեությունը եւ շահերի բախումը: Այնուամենայնիվ, ԳՐԵԿՈՒՆ հարկ է համարում նշել, որ այն չի պարունակում, օրինակ, նվերների վերաբերյալ դրույթներ կամ մանրամասն ներկայացված որոշակի սահմանափակումներ: Ինչպես նշվել է Գնահատման զեկույցում, վարքագծի կանոնագրքով պետք է նախատեսվի գոյություն ունեցող չափանիշների համապարփակ ներկայացում մեկ փաստաթղթում՝ նպատակ ունենալով տրամադրել դրանց կիրառման վերաբերյալ լրացուցիչ ուղղորդում: Թեեւ աշխատանքները սկսվել են, սակայն հանձնարարականի առաջին մասը դեռեւս պետք է ամբողջությամբ կատարվի: Հանձնարարականի երկրորդ մասի առնչությամբ ԳՐԵԿՈՒՆ հարկ է համարում նշել, որ վերջերս ձեռնարկվել են որոշ գործնական միջոցներ, որոնք ներառում են, *ի թիվս այլնի*, պատգամավորների էթիկայի կանոնների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում: Այնուամենայնիվ, դեռ պետք է իրականացվեն մասնագիտական վերապատրաստում եւ խորհրդատվություն:

18. ԳՐԵԿՈՒՆ եզրակացնում է, որ ii հանձնարարականը մասամբ է կատարվել:

Հանձնարարական iii.

19. *ԳՐԵԿՈՒՆ առաջարկել է համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ կանխելու համար առեւտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնող պատգամավորների նկատմամբ կիրառվող եւ նրանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ ձեռնարկատիրական*

գործունության շրջանակներում այլ վճարովի աշխատանք կատարելու սահմանափակումների շրջանցման հնարավորությունները:

20. Իշխանությունները հղում են կատարում Հայաստանի Սահմանադրությանը, «Հանրային ծառայության մասին» օրենքին (ՀԾՕ) եւ «Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքին (ՊԳԵՕ), որոնցով նախատեսվում է, որ Ազգային ժողովի պատգամավորները չեն կարող զբաղվել որեւէ բիզնես գործունեությամբ («ձեռնարկատիրական գործունեություն»): ՊԳԵՕ-ով սահմանվում է, որ պատգամավորական մանդատն ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պատգամավորը պարտավոր է դուրս գալ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից, ազատվել առետրային կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնից, դուրս գալ առետրային կազմակերպություններից կամ դրանց կանոնադրական կապիտալում իր բաժնեմասն ամբողջությամբ հանձնել հավատարմագրային կառավարման եւ այլն: Իշխանություններն անդրադառնում են նաեւ գույքի հայտարարագրման ամրապնդված ռեժիմին եւ նշում են, որ ՊԳԵՕ-ով պահանջվում է, որ պատգամավորն իր ելույթից կամ քվեարկությունից առաջ կամ հանձնաժողովի նիստում կամ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալիս ներկայացնի շահերի բախման ցանկացած դեպքի վերաբերյալ իր հայտարարությունը: «Ազգային ժողովի կանոնակարգ» նոր սահմանադրական օրենքով (ԿՕ, 157-րդ հոդված) նախատեսվում է անհամատեղելիության սահմանադրական պահանջները (Սահմանադրության 95-րդ եւ 98-րդ հոդվածներ) խախտելու դեպքում պատգամավորների լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մեխանիզմ: Ավելին, իշխանություններն անդրադարձել են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) ստեղծմանը, որը պետք է լինի անհամատեղելիությունները վերահսկող անկախ մարմին:
21. ԳՐԵԿՈ-ի կողմից հաշվի են առնվում տրամադրված տեղեկությունները: Այն հիշեցնում է, որ Գնահատման զեկույցն ընդունելու ժամանակ արդեն

գործում էին որոշ իրավական դրույթներ, ինչպես, օրինակ՝ Սահմանադրությամբ եւ այլ տարբեր օրենքներով նախատեսված առետրային գործունեությամբ զբաղվելու արգելքը եւ այլն: Ձեկույցում նշվել է, որ սահմանված կանոնները «խիստ ձեւակերպումներ ունեն», ինչպես նաեւ ընդգծվել է քաղաքական եւ տնտեսական շահերի չափազանց մեծ համընկնման հարցը լուծելու անհրաժեշտությունը՝ օրենսդրական դրույթները գործնականում կիրառելու միջոցով: ԳՐԵԿՈ-ն հաշվի է առնում Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի գործող հանձնաժողովի լիազորությունները եւ ԿԿՀ-ի ստեղծման նախապատրաստական աշխատանքները, որը նպատակ ունի վերահսկել պատգամավորների անհամատեղելիության դեպքերը: Այն նաեւ ընդունում է, որ ՊԳԵՕ-ում եւ նոր ԿՕ-ում ներկայացված է անհամատեղելիության վերաբերյալ սահմանադրական կարգավորումների կատարման ապահովման մեխանիզմ: Այս միջոցները տեղին են թվում, քանի դեռ դրանց ազդեցությունը հայտնի չէ: ԳՐԵԿՈ-ն ցանկանում է այս միջոցները որոշ ժամանակ գործողության մեջ դնելուց հետո լրացուցիչ գնահատել իրավիճակը, քանի որ անհամատեղելիության կանոնների գործնականում կիրառումը եղել է հանձնարարականի հիմնական պատճառը:

22. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ iii հանձնարարականը մասամբ է կատարվել:

Հանձնարարական iv.

23. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է պարզամավորների կողմից էթիկայի եւ վարքագծի նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողության համակարգը զգալիորեն ամրապնդել՝ ապահովելու համար՝ i) էթիկայի կանոնների եւ անհամատեղելիության դեպքերի ու լրացուցիչ գործունեության, շահերի բախման եւ նվերների ընդունման վերաբերյալ կանոնների անկախ, շարունակական եւ նախաձեռնողական վերահսկողությունը, ii) համապարասխան պարասխանաբանության ենթարկելու միջոցով կանոնների կատարումը:*

24. Իշխանությունները հայտնում են, որ ի հավելումն Ազգային ժողովի էթիկայի ժամանակավոր հանձնաժողովի (որը նշված է Գնահատման զեկույցում) ներկայիս կառուցվածքի, օրենքների «ինստիտուցիոնալ փաթեթով», իսկ ավելի կոնկրետ՝ 2017 թվականի հունիսի 9-ին ընդունված, սակայն դեռ գործողության մեջ չդրված՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով (ԿԿՀՕ) նախատեսվում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի գործող հանձնաժողովի հիման վրա ստեղծել Կոռուպցիայի կանխարգելման նոր հանձնաժողով (ԿԿՀ): Ակնկալվում է, որ այն կլինի անկախ կառույց՝ համապատասխան անձնակազմով եւ իր սեփական բյուջետային միջոցներով: Հանձնաժողովն իրավասու կլինի բարձրաստիճան պաշտոնատար անձանց (այդ թվում՝ Խորհրդարանականների, դատավորների եւ դատախազների) գույքի հայտարարագրումն ստուգելու, ինչպես նաեւ էթիկայի համապատասխան հանձնաժողովների եզրակացությունները վերանայելու եւ դրանց աջակցություն տրամադրելու համար: Այն կապահովի անհամատեղելիության պահանջների եւ այլ սահմանափակումների պահպանումը՝ բացառությամբ պատգամավորների էթիկայի կանոնների եւ *իրավիճակային* շահերի բախման կարգավորման: Դրան կտրվի վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու լիազորություններ: Նոր Հանձնաժողովի անդամները դեռեւս ընտրվում են Ազգային ժողովի կողմից:

25. Ավելին, իշխանությունները նշում են, որ նոր ԿՕ-ով (16-րդ հոդված) նախատեսվում է, որ Ազգային ժողովի էթիկայի ժամանակավոր հանձնաժողովն այժմ զբաղվելու է միայն պատգամավորների էթիկայի կանոններին առնչվող հարցերով, եւ որ 17-րդ հոդվածով նախատեսվում է, որ այն պետք է իր եզրակացությունը ներկայացնի Խորհրդարան՝ Խորհրդարանի կայքում այն հրապարակելու համար: Այն կարող է հարցմամբ դիմել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ եւ պահանջել փաստաթղթեր: Այն կարող է նաեւ պատվիրել տվյալ

փաստական հանգամանքների փորձաքննություն: Որպես կանոն, պահանջվող տեղեկություններն ու փաստաթղթերը, այդ թվում՝ պետական, ծառայողական կամ առետրային գաղտնիք պարունակող տեղեկությունները պետք է տրամադրվեն երկշաբաթյա ժամկետում:

26. Ինչ վերաբերում է հանձնարարականի երկրորդ մասին, իշխանությունները հայտնում են, որ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի (հետագայում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի) անհամատեղելիության պահանջների խախտման վերաբերյալ եզրակացությունները Սահմանադրական դատարանի համար հիմք են պատգամավորական մանդատից զրկելու համար: Այլ սահմանափակումների եւ էթիկայի կանոնների խախտումները կարող են հանգեցնել վարչական կամ քրեական պատասխանատվության միջոցների: 2017 թվականի հուլիսից Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին տրվել է վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու իրավասություն: Իշխանությունները նաեւ հաստատում են, որ Քրեական օրենսգրքում 2016 թվականին կատարված փոփոխություններով քրեականացվել է «ապօրինի հարստացումը»: Ավելին, գույքի վերաբերյալ հայտարարագրեր ներկայացնելու եւ խախտումների մասին տեղեկացնելու կանոնների խախտումների նկատմամբ վարչական պատասխանատվության միջոցներ նախատեսող՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի փոփոխություններն ընդունվել են 2017 թվականի հունիսի 9-ին եւ ուժի մեջ են մտել 2017 թվականի հուլիսի 1-ին:

27. ԳՐԵԿՈ-ն հարկ է համարում նշել, որ Ազգային ժողովի էթիկայի *ժամանակավոր* հանձնաժողովն այժմ իրավասու է զբաղվել էթիկայի կանոնների եւ պատգամավորների *իրավիճակային* շահերի բախման հետ կապված հարցերով: Նախկինում Գնահատման զեկույցի ընդունման ժամանակ էթիկայի ժամանակավոր հանձնաժողով արդեն գոյություն է ունեցել, սակայն ԳՐԵԿՈ-ն դրա արդյունավետության հետ կապված լուրջ

կասկածներ է ունեցել: ԳՐԵԿՈ-ն այժմ հարկ է համարում նշել, որ ԿԿՀՕ-ով նախատեսվում է վերահսկողություն իրականացնելու ընդհանուր մեխանիզմ, որը պետք է ստեղծվի Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի գործող հանձնաժողովի հիման վրա: ԳՐԵԿՈ-ն ընդունում է, որ ապագայում ստեղծվող՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ) ակնկալվում է լինել պաշտոնատար անձանց, այդ թվում՝ պատգամավորների անհամատեղելիության դեպքերը, նվերների եւ գույքի հայտարարագրումը վերահսկող մարմին: Ակնկալվում է, որ այս նոր Հանձնաժողովը կլինի անկախ կառույց՝ համապատասխան անձնակազմով եւ իր սեփական բյուջետային միջոցներով: Այնուամենայնիվ, այն դեռ չի գործում: Հանձնարարականի այս մասը մասամբ է կատարվել:

28. Հանձնարարականի ii մասի առնչությամբ ԳՐԵԿՈ-ն հաշվի է առնում ներկայացված օրենսդրական միջոցառումները, այն է՝ ապօրինի հարստացման քրեականացումը, գույքի վերաբերյալ հայտարարագրեր ներկայացնելու հետ կապված խախտումների համար վարչական պատասխանատվության միջոցների կիրառումը, ազդարարների ինստիտուտը, ինչպես նաեւ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի գործող հանձնաժողովին վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու իրավասություն տալը: Այս վերջին զարգացումները համապատասխանում են հանձնարարականի սույն մասի պահանջներին:

29. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ iv հանձնարարականը մասամբ է կատարվել:

Դատավորների շրջանում կոռուպցիայի կանխարգելումը

Հանձնարարական v.

30. ԳՐԵԿՈ-ն առաջարկել է շարունակել դատական իշխանության ինքնակառավարման համակարգի բարեփոխումները՝ նպատակ ունենալով

ամրապնդել դատական իշխանության անկախությունը, ապահովել ինքնակառավարման մարմինների բոլոր մակարդակներում դատավորների բավարար չափով ներկայացվածությունը եւ նվազեցնել դատարանների նախագահների, մասնավորապես Վճռաբեկ դատարանի նախագահի դերը:

31. Իշխանությունները հայտնում են, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները հանգեցրել են արդարադատության ոլորտում որոշ փոփոխությունների: Սահմանադրությամբ (173-րդ հոդված) այժմ նախատեսվում է, որ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների եւ դատավորների անկախությունը: Այն կազմված է տասն անդամից, ներառյալ՝ դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված, դատավորի առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող հինգ դատավոր՝ բոլոր ատյանների դատարաններից, ինչպես նաեւ իրավաբան գիտնականների եւ այլ հեղինակավոր իրավաբանների թվից պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով Ազգային ժողովի կողմից ընտրված հինգ անդամից: Բարձրագույն դատական խորհրդի անդամներն ընտրվում են հինգ տարի ժամկետով՝ առանց վերընտրվելու իրավունքի: Բարձրագույն դատական խորհուրդն իր կազմից ընտրում է խորհրդի նախագահ:
32. Բարձրագույն դատական խորհրդին հանձնարարված է ընտրել եւ առաջարկել նշանակման, ինչպես նաեւ առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածություններ, լուծել դատավորներին մեկ այլ դատարան գործուղելու հարցը, դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ համաձայնություն տալ, լուծել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու եւ նրա լիազորությունների դադարեցման հարցը, պատրաստել ծախսերի նախահաշիվներ եւ դրանք ներկայացնել Կառավարություն: Բացի այդ, իշխանությունները նշում են, որ նոր Դատական օրենսգիրքն աշխատանքային խմբի կողմից մշակվում է այնպես, որ համապատասխանի

նոր սահմանադրական պահանջներին: Օրենսգրքի նախագծում նշվում է, որ ինքնակառավարման մարմինները ներառում են Բարձրագույն դատական խորհուրդը եւ Դատավորների ընդհանուր ժողովը:

33. ԳՐԵԿՈ-ն ողջունում է այն սահմանադրական փոփոխությունները, որոնցով բարեփոխվել է Հայաստանում դատական իշխանության ինքնակառավարման համակարգը՝ Բարձրագույն դատական խորհուրդ ստեղծելու միջոցով: ԳՐԵԿՈ-ն հարկ է համարում նշել, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսը կազմված է իրենց գործընկեր դատավորների՝ Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված բոլոր ատյանների դատարանների դատավորներից: Ավելին, նվազեցվել է դատարանների նախագահների դերը, ինչպես պահանջվում էր հանձնարարականով: Որպես ամփոփում կարելի է նշել, որ Բարձրագույն դատական խորհրդի ստեղծումը կարելու բարեփոխում է, որն ընթանում է ճիշտ ուղղությամբ:
34. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ (v) հանձնարարականը բավարար չափով է կատարվել:

Հանձնարարական vi.

35. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է վերացնել Դատարանների նախագահների խորհրդի կողմից գործերը դատավորների միջեւ առանց նրանց համաձայնության վերաբաշխելու հնարավորությունը՝ դատավորների (դատարանների) համար հավասար աշխատանքային ծանրաբեռնվածություն կամ դատարանում դատավորների թվի պակասը լրացնելու նպատակով:*
36. Իշխանությունները հայտնում են, որ, Սահմանադրության համաձայն, Բարձրագույն դատական խորհուրդը լուծում է դատավորներին մեկ այլ դատարան գործուղելու հարցը (175-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ): Նրանք նաեւ հաստատում են, որ դրա հետ կապված մանրամասները

սահմանվում են Դատական օրենսգրքի նախագծով: Դրանով նախատեսվում է, որ դատավորն իր համաձայնությամբ կարող է գործուղվել մինչև մեկ տարի ժամկետով: Նույն դատավորը չի կարող կրկին գործուղվել նախորդ գործուղման ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում: Դատական օրենսգրքի նախագիծը նախատեսվում էր Ազգային ժողով ներկայացվել 2017 թվականի դեկտեմբերին:

37. ԳՐԵԿՈ-ն ողջունում է Սահմանադրության այս փոփոխությունը, որով այժմ Բարձրագույն դատական խորհրդի համար նախատեսվում է դատավորներին գործուղելու հարցը լուծելու իրավասություն: Ավելին, այն նշում է, որ այդ առումով մանրամասն դրույթներ են նախատեսվում Դատական օրենսգրքի նախագծով: ԳՐԵԿՈ-ն գնահատում է այն փաստը, որ այդ գործուղումներն իրականացվում են միայն տվյալ դատավորների համաձայնությամբ: Թեև հանձնարարականում ներկայացված հարցերը մանրամասն ուսումնասիրվել են, սակայն հստակ է, որ Դատական օրենսգրքի փոփոխությունները դեռ չեն քննարկվել Խորհրդարանի կողմից:
38. Այսպիսով, ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ vi հանձնարարականը մասամբ է կատարվել:

Հանձնարարական vii.

39. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է բարեփոխել դատավորների պաշտոնների համալրման, առաջխաղացման եւ պաշտոնից ազատման ընթացակարգերը, այդ թվում՝ i) ամրապնդելով այդ ընթացակարգերում դատական իշխանության դերը եւ նվազեցնելով Հանրապետության նախագահի դերը եւ պահանջելով նրանից տալ իր որոշումների գրավոր հիմնավորումները եւ ii) ապահովելով այդ ընթացակարգերի ժամանակ ընդունված ցանկացած որոշման դատական կարգով բողոքարկման հնարավորությունը:*
40. Իշխանությունները հայտնում են, որ փոփոխված Սահմանադրությամբ նախատեսվում են դատավորների թեկնածուների առաջադրման եւ

նշանակման նոր ընթացակարգեր: Ինչ վերաբերում է հանձնարարականի առաջին մասին, նրանք նշում են, որ Բարձրագույն դատական խորհուրդը կազմում, հաստատում եւ առաջին ատյանի եւ վերաքննիչ դատարանների դատավորների (ինչպես նաեւ դրանց նախագահների) թեկնածությունների ցուցակը ներկայացնում է Հանրապետության նախագահին, որը նշանակում է նրանց կամ առաջարկությունն իր առարկություններով վերադարձնում է Բարձրագույն դատական խորհուրդ: Եթե Խորհուրդը չի ընդունում Նախագահի առարկությունը (առարկությունները), ապա Նախագահը նշանակում է դատավորին կամ դիմում է Սահմանադրական դատարան՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշումը վիճարկելու համար (Սահմանադրության 139-րդ հոդված): Իշխանությունների կողմից ներկայացված մանրամասներից նաեւ հետեւում է, որ Բարձրագույն դատական խորհուրդը իրավասու է լուծել դատավորների լիազորությունների դադարեցման հարցը (Սահմանադրության 175-րդ հոդվածի 8-րդ կետ): Ինչ վերաբերում է հանձնարարականի երկրորդ մասին, իշխանությունները նշում են, որ դատավորները կարող են դիմել Սահմանադրական դատարան՝ նշանակման կամ պաշտոնից ազատման մասին որոշումներով իրենց նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը վիճարկելու համար (169-րդ հոդվածի 8-րդ կետի ուժով): Դատական օրենսգրքի նախագծի համաձայն՝ դատավորները կկարողանան այդ որոշումները բողոքարկել Վարչական դատարան:

41. Հանձնարարականի առաջին մասի վերաբերյալ, ԳՐԵԿՈ-ն ողջունում է Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորների թեկնածությունների ցուցակները պատրաստելու համար պատասխանատու լինելը եւ Հանրապետության նախագահին առաջարկություն ներկայացնելը: Ըստ երեւոյթի՝ Նախագահից պահանջվում է հիմնավորել նշանակումների իր մերժումները: Ավելին, ԳՐԵԿՈ-ն ճանաչում է Նախագահի կողմից հաստատումը մերժելը չեղարկելու՝ Բարձրագույն դատական խորհրդի իրավունքը: ԳՐԵԿՈ-ն նշում է, որ վերանայված Սահմանադրությամբ սահմանվում է, որ պաշտոնից

ազատման մասին որոշումների կայացումը մտնում է Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունների մեջ: Հանձնարարականի առաջին մասը կատարվել է: Ինչ վերաբերում է երկրորդ մասին, ԳՐԵԿՈ-ն նշում է, որ նշանակման կամ պաշտոնից ազատման մասին որոշումների սահմանադրականությունը կարող է վիճարկվել Սահմանադրական դատարան, մինչդեռ կարելիություն ունեցող գործերով բողոքարկման ձեռով իրավական պաշտպանության միջոց առկա չէ: Ընդ որում, ԳՐԵԿՈ-ն նշում է, որ Դատական օրենսգրքի նախագիծը կարծես թե տալիս է Վարչական դատարան բողոքարկելու հնարավորություն: Քանի որ սույն նախագիծն առայժմ չի քննարկվել խորհրդարանի կողմից, ԳՐԵԿՈ-ն համարում է, որ հանձնարարականի այս մասը շարունակում է մնալ չկատարված:

42. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ vii հանձնարարականը մասամբ է կատարվել:

Հանձնարարական viii.

43. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է՝ i) վերանայել դատավորների դեմ հարուցվող կարգապահական վարույթում Արդարադատության նախարարության դերակատարությունը, ii) ունենալ համապատասխան երաշխիքներ՝ ապահովելու համար, որ կարգապահական վարույթը չօգտագործվի որպես ներգործության կամ դատավորների նկատմամբ հաշվեհարդար իրականացնելու միջոց, ներառյալ՝ դատավորների համար կարգապահական որոշումները դատարան բողոքարկելու հնարավորությունը:*

44. Ինչ վերաբերում է հանձնարարականի առաջին մասին, իշխանությունները հայտնում են, որ Դատական օրենսգրքի նախագծում Արդարադատության նախարարի՝ դատավորի դեմ կարգապահական վարույթ հարուցելու իրավունքը պահպանվել է⁵, սակայն այդ դեպքերում Նախարարը պետք է

⁵ Արդարադատության նախարարության նման լիազորությունը հաստատվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից՝ Հայաստանի դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ եզրակացության մեջ (CDL-AD (2017)19:

հիմնավորի նման որոշումը (գործող Դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 6-րդ մաս): Համաձայն Դատական օրենսգրքի նախագծի՝ վարույթ հարուցող մարմինն իրավունք ունի պահանջելու կամ ստանալու կարգապահական վարույթ սկսելու համար նյութեր (ուժի մեջ մտած դատական ակտերի դեպքում), սակայն չի կարող միջամտել վարույթում գտնվող դատական գործերին: Պատասխանող կողմի (դատավորի) դատավարական իրավունքներն ապահովվում են՝ նրան հնարավորություն տալով ներկայացնել փաստարկներ թե՛ կարգապահական վարույթի հարուցման փուլում (հավելյալ երաշխիք) եւ թե՛ ԲԴԽ-ում: Ինչ վերաբերում է հանձնարարականի երկրորդ մասին, իշխանությունները նշում են, որ փոփոխված Սահմանադրությամբ սահմանվում է, որ դատավորը չի կարող ենթարկվել պատասխանատվության՝ արդարադատություն իրականացնելիս հայտնաձև կարծիքների կամ կայացրած դատական ակտերի համար՝ բացառությամբ, երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ (164-րդ հոդվածի 2-րդ մաս): Իշխանությունները շեշտում են, որ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշում կայացնելիս Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան (Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մաս): Դատավորի լիազորությունների դադարեցումը որպես տույժի տեսակ ներկայում վերաբերում է միայն կոպիտ/զգալի/էական կարգապահական խախտումներին, եւ այդ որոշումը կայացվում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից (Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ մաս): Նրանք նաեւ հաղորդում են, որ աշխատավարձի (մի մասի) պահումը որպես կարգապահական տույժ հանվել է: Ըստ իշխանությունների՝ դատավորը կարող է վիճարկել կարգապահական բնույթի որոշումների սահմանադրականությունը Սահմանադրական դատարանում:

45. ԳՐԵԿՈ-ն նշում է, որ Արդարադատության նախարարը պահպանում է դատավորների դեմ կարգապահական վարույթ հարուցելու իրավունքը:

ԳՐԵԿՈ-ն շեշտում է, որ գործադիր իշխանության մաս հանդիսացող Արդարադատության նախարարի ներգրավվածությունը դատավորների նկատմամբ կարգապահական վարույթում կարող է դիտարկվել որպես դատական անկախության հետ ոչ ամբողջությամբ համատեղելի: Դատական օրենսգրքի նախագծում նախատեսվում է, որ Նախարարի այս լիազորությունը որոշ սահմանափակումներով պահպանվում է: Իշխանությունները ներկայացնում են, որ համաձայն Դատական օրենսգրքի նախագծի՝ նախարարը հնարավորություն չունի միջամտելու վարույթում գտնվող գործերին: ԳՐԵԿՈ-ն նշում է, որ կանոնակարգող փոփոխություններ տեղի չեն ունեցել, քանի որ Դատական օրենսգրքի նախագիծը նույնիսկ չի քննարկվել Խորհրդարանում: Հանձնարարականի առաջին մասի պահանջները չեն կատարվել:

46. Ինչ վերաբերում է հանձնարարականի ii մասին, ԳՐԵԿՈ-ն նշում է, որ վերանայված Սահմանադրությամբ սահմանվում է, որ Բարձրագույն դատական խորհուրդը ներկայում իրավասու է որոշումներ կայացնել դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ (175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ): Սա ողջունելի է, որպես ընթացակարգային երաշխիքի ձեւ՝ հաշվի առնելով սույն մարմնի կազմը (տե՛ս v հանձնարարականը): Ավելին, այն սկզբունքը, որ դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքների կամ կայացրած դատական ակտերի համար (Սահմանադրության 164-րդ հոդված), մեկ այլ երաշխիք է: ԳՐԵԿՈ-ն գնահատում է նաեւ այն, որ նոր Սահմանադրությամբ նշվում է, որ դատավորի լիազորությունների դադարեցումը տույժ է համարվում միայն կոպիտ կարգապահական խախտումների դեպքում (164-րդ հոդվածի 9-րդ մաս): Այնուամենայնիվ, ԳՐԵԿՈ-ն մտահոգված է, որ կարծես թե հնարավոր չէ կարգապահական բնույթի որոշումը բողոքարկել դատարան ավելի, քան Սահմանադրական դատարանում դրա սահմանադրականությունը

վիճարկելու ձեռով: Կարելի է եզրակացնել, որ հանձնարարականի այս մասը մասամբ է կատարվել:

47. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ viii հանձնարարականը մասամբ է կատարվել:

Հանձնարարական ix.

48. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է ներմուծել արդյունավետ կանոններ եւ մեխանիզմներ՝ արդարադատություն իրականացնելիս դատավորների գործունեությանն անհարկի միջամտության դեպքերը բացահայտելու եւ այդպիսի միջամտություն իրականացնող կամ իրականացնելու փորձ կատարող դատավորներին պատասխանատվության ենթարկելու համար:*

49. Իշխանությունները հղում են կատարում Դատական օրենսգրքի նախագծին, որով արգելվում են ցանկացած միջամտություն դատարանի գործունեությանը եւ ցանկացած անհարկի ներգործություն դատարանների վրա, ինչպես նաեւ դատարանների նկատմամբ անհարգալից վերաբերմունքը: Դատական օրենսգրքի նախագծով Բարձրագույն դատական խորհրդին տրամադրվում է կարգապահական հարցերում լիազորություններ այն դատավորների նկատմամբ, որոնք միջամտել են մեկ այլ դատավորի գործունեությանը: Կարգապահական վարույթ կարող է հարուցվել նաեւ այն դատավորի նկատմամբ, որը չի հաղորդում իր գործունեությանը միջամտելու մասին: Այլ անձանց կողմից դատավորի գործունեությանն *առերեսույթ* միջամտության դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը, հիմնվելով համապատասխան դատավորի հայտարարության վրա, կարող է համապատասխան մարմիններ միջնորդություն ներկայացնել անհարկի միջամտության համար պատասխանատու անձանց պատասխանատվության ենթարկելու համար:

50. ԳՐԵԿՈ-ն նշում է, որ Սահմանադրությամբ, ինչպես նախկինում, սահմանվում է, որ «արդարադատություն իրականացնելիս դատավորն

անկախ է, անաչառ եւ գործում է միայն Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան»: Ի լրումն, փոփոխված Սահմանադրությամբ ներկայումս հստակորեն արգելվում է ցանկացած անհարկի միջամտություն՝ արդարադատության իրականացմանը (162-րդ հոդվածի 2-րդ մաս): Դատական օրենսգրքի նախագիծը պարունակում է նմանատիպ դրույթներ, եւ դրանով մանրամասն ներկայացվում են անհարկի ներգործության դեպքերի մասին հաղորդելու եւ դրանց առնչությամբ վարույթ հարուցելու ընթացակարգերը: Այնուամենայնիվ, Դատական օրենսգրքի նախագիծը դեռեւս չի ներկայացվել ԳՐԵԿՈ եւ չի քննարկվել Խորհրդարանի կողմից:

51. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ ix հանձնարարականը մասամբ է կատարվել:

Հանձնարարական x.

52. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է դատավորների անձեռնմխելիությունը սահմանափակել արդարադատության իրականացմանը նրանց մասնակցության հետ կապված գործունեությամբ («գործառույթների իրականացման հետ կապված անձեռնմխելիություն»):*

53. Իշխանությունները հայտնում են, որ 2015 թվականին փոփոխված Սահմանադրությամբ ներմուծվել է գործառույթների իրականացման հետ կապված անձեռնմխելիության սկզբունքը: Սահմանադրության 164-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանվում է, որ «դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ», եւ որ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Բարձրագույն դատական խորհրդի համաձայնությամբ (Սահմանադրական դատարանի համաձայնությամբ՝ Սահմանադրական դատարանի դատավորների դեպքում): Ավելին, դատավորն իր

լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Բարձրագույն դատական խորհրդի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից (առանց Սահմանադրական դատարանի համաձայնության՝ Սահմանադրական դատարանի դատավորների դեպքում), բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո:

54. ԳՐԵԿՈ-ի կողմից հաշվի է առնվում տրամադրված տեղեկությունը: Փոփոխված Սահմանադրությամբ (164-րդ հոդված) ներկայում սահմանափակվել է դատավորների՝ դատական գործառույթներն իրականացնելիս հայտնած կարծիքների եւ կայացված ակտերի նկատմամբ անձեռնմխելիության, այսպես կոչված «գործառույթների իրականացման հետ կապված անձեռնմխելիության» պաշտպանությունը, ինչպես պահանջվում է սույն հանձնարարականով: Անձեռնմխելիության այս սահմանափակ ձեւը պետք է բավարար լինի՝ դատավորներին իրենց պարտականություններն իրականացնելիս անհարկի խոչընդոտներից պաշտպանելու համար, ինչպես նշված է Գնահատման զեկույցում:
55. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ x հանձնարարականը կատարվել է բավարար չափով:

Հանձնարարական xi.

56. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է իրականացնել նպատակաուղղված քաղաքականություն՝ դատավորների վրա անհարկի ներգործությունը, դատական իշխանությունում շահերի բախումը եւ կոռուպցիան կանխարգելելու ուղղությամբ, ինչը ներառում է՝ i) բոլոր դատավորների համար պարբերական բնույթ կրող պարտադիր վերապատրաստումների անցկացում՝ էթիկայի եւ վարքագծի, դատական անաչառության եւ անկախության, ինչպես նաեւ շահերի բախումը եւ կոռուպցիան կանխարգելելու վերաբերյալ, որոնք պետք է կազմակերպվեն դատական*

իշխանության սերտ մասնակցությամբ, եւ ii) դատական համակարգում գաղտնի խորհրդատվության տրամադրում՝ դատավորների իրազեկության մակարդակը բարձրացնելու եւ i մասում նշված ոլորտների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու համար:

57. Իշխանությունները հայտնում են, որ Դատական օրենսգրքի նախագծով նախատեսվում է խորհրդատվության տրամադրում էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից՝ դատավորի գրավոր դիմումի հիման վրա: Դրանով նաեւ նախատեսվում է վարքագծի կանոնագրքի ներառում դատավորների վերապատրաստման ծրագրում եւ պարտադիր վերապատրաստում չանցած դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելը (նույնիսկ լիազորությունների դադարեցում՝ երկու հաջորդական տարիների ընթացքում վերապատրաստում չանցնելու համար): Դատավորների վարքագծի կանոնագրքի վերաբերյալ պարտադիր վերապատրաստումը նախատեսված է Դատական եւ իրավական բարեփոխումների 2018-2023 թվականների ռազմավարության գործողությունների ծրագրով: Իշխանությունները նաեւ հղում են կատարում Արդարադատության ակադեմիայի կողմից կազմակերպված հետեւյալ վերապատրաստման գործունեությանը⁶

- Սեմինար՝ դատավորների մասնագիտական էթիկայի վերաբերյալ, որին մասնակցել է 7 դատավոր (2016 թվականի ապրիլի 30).
- Դատավորների մասնագիտական էթիկայի վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել է 84 գործող դատավոր (2016 թվականի նոյեմբերի 11-ից մինչեւ դեկտեմբերի 16-ը).
- Հանրային ծառայությունում կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել է 23 դատավոր (2016 թվականի նոյեմբերի 28-ից մինչեւ դեկտեմբերի 8-ը).

⁶ Արդարադատության ակադեմիան պատասխանատու է դատավորների եւ դատախազների, դատավորի եւ դատախազի թեկնածուների, ինչպես նաեւ Արդարադատության ակադեմիայում ուսումն ավարտած անձանց վերապատրաստման համար:

- Դատավորների մասնագիտական էթիկայի վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել է դատավորի 19 թեկնածու (2017 թվականի ապրիլի 14-ից մինչև մայիսի 19-ը):

58. ԳՐԵԿՈ-ն նշում է, որ ներկա Դատական օրենսգրքով սահմանվում է դատավորներին դատական վերապատրաստումներին մասնակցելը պարտադրելու միջոցներ: ԳՐԵԿՈ-ի կողմից նաեւ հաշվի են առնվում դատավորների էթիկայի թեմայով անցկացված մի քանի *հասրուկ* վերապատրաստումներ, որոնք բավարարում են հանձնարարականի որոշ պահանջներ: ԳՐԵԿՈ-ն նշում է, որ Դատական օրենսգրքի նախագիծը նպատակ ունի ստեղծելու հնարավորություններ՝ էթիկայի հարցերով խորհրդատվության եւ վերապատրաստումների համար, եւ դրանով փորձ է արվում շեշտել նման խորհրդատվությունը գաղտնի տրամադրելու կարելիությունը՝ որպես առանձին դատավորների համար երաշխիք: ԳՐԵԿՈ-ն շեշտում է բոլոր պաշտոնավարող դատավորների համար էթիկական վարքագծի, դատական անաչառության, անկախության եւ նմանատիպ հարցերի վերաբերյալ կանոնավոր եւ պարտադիր վերապատրաստման ծրագրերի կարելիությունը հատկապես իրականացվող դատական բարեփոխումներից հետո ընկած ժամանակահատվածում: Հանձնարարականի բոլոր մասերի առնչությամբ ակնկալվում են զգալիորեն ավելի շատ մշտական բնույթ կրող ջանքեր եւ միջոցառումներ:

59. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ xi հանձնարարականը մասամբ է կատարվել:

Դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելումը

Հանձնարարական xii.

60. ԳՐԵԿՈ-ն առաջարկել էր ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ գլխավոր դատախազի ընտրության, նշանակման եւ պաշտոնից ազատման

գործընթացներում մասնագիտական եւ ոչ քաղաքական փորձաքննություններ առելու, այդ գործընթացների թափանցիկությունը բարձրացնելու եւ անպատշաճ քաղաքական ազդեցության ռիսկերը նվազեցնելու համար:

61. Իշխանությունները հայտնում են, որ Սահմանադրությամբ (2015 թվականի փոփոխություններով) սահմանվում է, որ Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովն է առաջադրում գլխավոր դատախազի պաշտոնի թեկնածու, այլ ոչ թե Հանրապետության նախագահը, ինչպես նախկինում էր: Ազգային ժողովն ընտրում է պաշտոնից ազատում է գլխավոր դատախազին պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-ով: Գլխավոր դատախազն ընտրվում է 6 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ընտրվել ավելի քան երկու անգամ: Ավելին, Սահմանադրությունը պարունակում է թեկնածուներին ներկայացվող կոնկրետ մասնագիտական պահանջներ, ներառյալ՝ բարձրագույն իրավաբանական կրթությունը եւ 10 տարվա մասնագիտական փորձը: Նմանատիպ դրույթներ են պարունակվում Խորհրդարանի կողմից 2017 թվականի նոյեմբերի 17-ին ընդունված եւ Նախագահի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 1-ին ստորագրված՝ «Դատախազության մասին» օրենքում (ԴՕ)⁷: Սույն օրենքը թվարկում է գլխավոր դատախազին պաշտոնից ազատելու հիմքերը (63-րդ հոդված): Լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը հնարավոր է, մասնավորապես, եթե գլխավոր դատախազը «կատարել է օրենքի խախտում» կամ «դատախազի վարքագծի կանոնների խախտում, որը վարկաբեկել է դատախազության հեղինակությունը», ինչպես նաեւ կատարել է սահմանափակումների եւ անհամատեղելիության պահանջների խախտումներ: Նոր ԿՕ-ով կարգավորվում է պաշտոնից ազատման ընթացակարգը (153-րդ հոդված)՝ սահմանելով, որ նման ընթացակարգ կարող է նախաձեռնել խմբակցությունը: Իշխանությունների կարծիքով այն փաստը, որ իշխող կուսակցությունը մեծամասնություն է կազմում համապատասխան

⁷ Անգլերենով թարգմանությունը տրամադրվել է իշխանությունների կողմից:

հանձնաժողովում, լրացուցիչ երաշխիք է տրամադրում «գործիքավորված եղանակով» պաշտոնից ազատման դեմ: Ի լրումն, նոր ԿՕ-ով սահմանվում է, որ յուրաքանչյուր մշտական հանձնաժողով պետք է ունենա մեկ համակարգող փորձագետ եւ առնվազն երկու փորձագետ (մասնագետ) (162-րդ հոդվածի 3-րդ մաս): Ավելին, Խորհուրդը կարող է ավելացնել մշտական հանձնաժողովում փորձագետների թիվը՝ հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ: ԿՕ-ով նաեւ նախատեսվում է հանձնաժողովի նիստերին անկախ փորձագետներ հրավիրելու հնարավորությունը (13-րդ հոդված):

62. ԳՐԵԿՈՒ-ի կողմից հաշվի է առնվում տրամադրված տեղեկությունը: Փոփոխված Սահմանադրությունում փոխվել է գլխավոր դատախազի պաշտոնի համար թեկնածու առաջադրելու ընթացակարգը: Չնայած Խորհրդարանը վերջում դեռեւս ընտրում է գլխավոր դատախազին, այս պաշտոնի համար թեկնածու (թեկնածուներ) Հանրապետության Նախագահն այլեւս չի առաջադրում: Փոխարենը, այս գործառույթը վերապահվում է մշտական խորհրդարանական հանձնաժողովին: Սա բարելավում է, քանի որ այն նաեւ հանձնաժողովին թույլ է տալիս գնահատել թեկնածուների որակավորումները՝ անհրաժեշտության դեպքում օգտագործելով արտաքին փորձաքննության հնարավորությունը: Ավելին, ողջունելի է, որ գլխավոր դատախազի պաշտոնի համար Սահմանադրությամբ սահմանված են հստակ չափորոշիչներ, ներառյալ՝ իրավաբանական կրթության եւ մասնագիտական փորձի վերաբերյալ պահանջները: ԳՐԵԿՈՒ-ն նշում է, որ գլխավոր դատախազին կարող է պաշտոնից ազատել նաեւ Ազգային ժողովը՝ ձայների 3/5-ով (այլ ոչ թե պարզ մեծամասնությամբ, ինչպես նախկինում): ԳՐԵԿՈՒ-ն ընդունում է, որ Սահմանադրության փոփոխությունները եւ ԴՕ-ի ընդունումը հանձնարարականի պահանջներին համահունչ, համապատասխան միջոցներ են:
63. ԳՐԵԿՈՒ-ն եզրակացնում է, որ xii հանձնարարականը կատարվել է բավարար չափով:

Հանձնարարական xiii.

64. ԳՐԵԿՈ-ն առաջարկել է փոփոխել Էթիկայի հանձնաժողովի կազմը՝ նպատակ ունենալով ամրապնդել դատախազության անկախությունն անպատշաճ քաղաքական ազդեցությունից՝ հատկապես ապահովելով՝ i) որ դրա կազմի մեջ մտնեն մեծամասամբ դատախազներ, եւ ii) որ այդ դատախազներից առնվազն որոշներն ընտրվեն իրենց գործընկեր դատախազների կողմից:
65. Հանձնարարականի i մասի առումով իշխանությունները հղում են կատարում 2017 թվականի նոյեմբերի 17-ին ընդունված «Դատախազության մասին» օրենքին (ԴՕ), որով նախատեսվում է, որ Էթիկայի հանձնաժողովը պետք է կազմված լինի յոթ անդամից, ներառյալ՝ գլխավոր դատախազի տեղակալը, երեք դատախազ եւ երեք իրավաբան գիտնական: Հանձնաժողովը պետք է նախագահի գլխավոր դատախազի տեղակալը: Ինչ վերաբերում է հանձնարարականի ii մասին, իշխանությունները հայտնում են, որ երեք դատախազ ձայների մեծամասնությամբ ընտրվում է գլխավոր դատախազի, գլխավոր դատախազի՝ Էթիկայի հանձնաժողովի անդամ չհանդիսացող տեղակալների, Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, Երեւան քաղաքի դատախազների, մարզերի դատախազների, Երեւան քաղաքի վարչական շրջանների դատախազների եւ կայազորների զինվորական դատախազների կողմից:
66. ԳՐԵԿՈ-ն հաշվի է առնում տրամադրված տեղեկությունը, որում նշվում է, որ նոր ընդունված ԴՕ-ն վերաբերում է հանձնարարականի երկու մասերին, այսինքն՝ Էթիկայի հանձնաժողովում դատախազների թիվն ավելացնելուն եւ դատախազների՝ իրենց գործընկեր դատախազների կողմից ընտրվելուն:
67. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ xiii հանձնարարականը կատարվել է քավարար չափով:

Հանձնարարական xiv.

68. ԳՐԵԿՈ-ն առաջարկել էր բարեփոխել դատախազների պաշտոնների համալրման եւ առաջխաղացման ընթացակարգերը, այդ թվում՝
- i) բարձրացնելով Որակավորման հանձնաժողովում որոշումների ընդունման գործընթացի թափանցիկությունը, սահմանափակելով գլխավոր դատախազի հայեցողական լիազորությունները եւ պահանջելով նրանից տալ իր որոշումների գրավոր հիմնավորումները եւ ii) թույլ տալով չընտրված թեկնածուներին բողոքարկել դատարան՝ կոնկրետ եւ ճշգրիտ իրավական դրույթների հիման վրա:
69. Հայաստանի իշխանությունները հղում են կատարում 2017 թվականի նոյեմբերի 17-ին ընդունված «Դատախազության մասին» օրենքին, որի համաձայն՝ Որակավորման հանձնաժողովը պետք է լինի անկախ հանձնաժողով, որը պատասխանատու է թափուր պաշտոնների համար բաց մրցույթների եւ դատախազների հետագա ընտրության համար: Բաց մրցույթների հայտարարությունները հրապարակվում են դատախազության կայքէջում: Որակավորման հանձնաժողովի կողմից կատարվող ընտրության արդյունքում հանձնաժողովը դատախազների թեկնածությունների ցուցակը տրամադրում է գլխավոր դատախազին, որն առաջադրում է թեկնածուներին (i մաս): Դիտարկելով հանձնարարականի ii մասը՝ իշխանությունները կրկին հղում են կատարում «Դատախազության մասին» օրենքին, որում սահմանված է, որ թեկնածուն, որի դիմումը մերժվել է, կարող է երեք օրվա ընթացքում մերժման մասին որոշումը բողոքարկել դատարան: Ավելին, Որակավորման հանձնաժողովից դրական եզրակացություն ստացած, սակայն գլխավոր դատախազի կողմից՝ նշանակման ենթակա թեկնածությունների ցուցակում չընդգրկված թեկնածուները կարող են գլխավոր դատախազի այս որոշումը բողոքարկել «դատական կարգով»:
70. ԳՐԵԿՈ-ի կողմից հաշվի է առնվում տրամադրված տեղեկությունը: Բաց մրցույթները հրապարակայնորեն հայտարարելու ընթացակարգը

գնահատման այցի ժամանակ արդեն գոյություն ուներ: Փոխարենը հանձնարարականի մեջ նշվում է համալրման ընթացակարգում Որակավորման հանձնաժողովի, ինչպես նաև գլխավոր դատախազի կողմից վերջնական որոշման հետ կապված թափանցիկության բացակայությունը: Ողջունելի է, որ Որակավորման հանձնաժողովի՝ դիմումը մերժելու վերաբերյալ որոշումները ներկայում կարող են բողոքարկվել ԴՕ-ի համաձայն: Ավելին, ներկայում գլխավոր դատախազը պետք է կայացնի հիմնավորված որոշում այն թեկնածուների առնչությամբ, որոնց առաջադրումը մերժվել է, եւ ի լրումն դրան՝ այդպիսի որոշումները ենթակա են բողոքարկման: ԳՐԵԿՈ-ն ողջունում է այս միջոցառումները, որոնց համապատասխանությունը հանձնարարականին հիմնականում ապահովվել է: Այնուամենայնիվ, պահանջվում են լրացուցիչ միջոցառումներ՝ Որակավորման հանձնաժողովի ընթացակարգերի առնչությամբ գործընթացն ավելի թափանցիկ դարձնելու համար:

71. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ xiv հանձնարարականը մասամբ է կատարվել:

Հանձնարարական xv.

72. ԳՐԵԿՈ-ն առաջարկել է իրականացնել նպատակաուղղված քաղաքականություն՝ դատախազների նկատմամբ անհարկի ներգործությունը, ինչպես նաև դատախազական ծառայությունում շահերի բախումը եւ կոռուպցիան կանխարգելելու համար, ինչը ներառում է՝ i) բոլոր դատախազների համար պարբերական բնույթ կրող պարտադիր վերապատրաստումների անցկացում՝ էթիկայի եւ վարքագծի, անկողմնակալության ու անկախության, շահերի բախումը եւ կոռուպցիան կանխարգելելու վերաբերյալ, եւ ii) դատախազական ծառայությունում գաղտնի խորհրդավորության տրամադրում՝ i մասում նշված ոլորտների վերաբերյալ դատախազներին խորհրդավորություն տրամադրելու եւ նրանց իրազեկության մակարդակը բարձրացնելու նպատակով:

73. Ինչ վերաբերում է հանձնարարականի i մասին, իշխանությունները վկայակոչում են ԴՕ-ն (51-րդ հոդված), որով սահմանվում է, որ դատախազները պետք է պարբերաբար վերապատրաստում անցնեն: Նրանք նաեւ վկայակոչում են «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքը, որով սահմանվում են կանոններ՝ դատախազների վերապատրաստման ուսումնամեթոդական ծրագրերի եւ այլնի վերաբերյալ: Ձեռնարկված կոնկրետ միջոցառումների առնչությամբ նրանք հղում են կատարում Արդարադատության ակադեմիայի կողմից կազմակերպված հետեւյալ վերապատրաստման գործողություններին՝

- Վերապատրաստման դասընթաց՝ կոռուպցիայի դեմ պայքարի եւ դատախազների մասնագիտական էթիկայի վերաբերյալ, որին մասնակցել են դատախազի 12 թեկնածու եւ 31 գործող դատախազ (2016 թվականի օգոստոսի 8-ից մինչեւ սեպտեմբերի 9-ը եւ 2017 թվականի ապրիլի 18-ից մինչեւ 28-ը).
- Վերապատրաստման դասընթաց՝ դատախազների մասնագիտական էթիկայի վերաբերյալ՝ որպես դատավորների մասնագիտական էթիկայի վերաբերյալ սեմինարի մաս (2016 թվականի ապրիլի 30).
- Իշխանությունները նշում են, որ կոռուպցիայի դեմ պայքարի եւ դատախազների մասնագիտական էթիկայի վերաբերյալ եւս երկու վերապատրաստման դասընթաց նախատեսվում են դատախազի թեկնածուների համար 2017 թվականին:

74. Իշխանությունները նաեւ հայտնում են, որ հակակոռուպցիոն բարեփոխումների օրենսդրական փաթեթի համար պատասխանատու աշխատանքային խմբի կողմից հաշվի է առնվել հանձնարարականի ii մասում հայտնած մտահոգությունը: Կոռուպցիայի կանխարգելման ապագա հանձնաժողովը անհամատեղելիության պահանջների եւ այլ սահմանափակումների մասով աջակցություն եւ խորհրդատվություն

կտրամադրի էթիկայի ինստիտուցիոնալ հանձնաժողովներին: Ավելին, ԴՕ-ի նախագծով նախատեսվում է, որ դատախազը կարող է դիմել դատախազների էթիկայի հանձնաժողովին՝ վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվություն ստանալու համար:

75. ԳՐԵԿՈ-ն նշում է, որ մի քանի վերապատրաստման միջոցառումներ կազմակերպվել են դատախազների համար: Սակայն ԳՐԵԿՈ-ն չի կարող եզրակացություն անել այն մասին, որ պարտադիր եւ պարբերաբար կազմակերպվող՝ էթիկայի վերաբերյալ վերապատրաստման դասընթացները նախատեսված են եղել բոլոր դատախազների համար, ինչպես պահանջվում է հանձնարարականով: ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ հանձնարարականի այս մասին մասամբ է անդրադարձ կատարվել: Հանձնարարականի ii մասի առնչությամբ ԳՐԵԿՈ-ն նշում է, որ թվում է՝ ընթացքի մեջ է դատախազներին խորհրդատվություն տրամադրելու հատուկ մեխանիզմը, սակայն այն կարծես տարանջատված չէ կարգապահական մարմիններից (տե՛ս գնահատման զեկույցի 223-րդ կետը): Ակնհայտ է, որ Կոռուպցիայի կանխարգելման ապագա հանձնաժողովը կտրամադրի խորհրդատվություն՝ անհամատեղելիության պահանջների եւ այլ սահմանափակումների, բայց ոչ դատախազների էթիկայի վերաբերյալ: Հանձնարարականի այս մասը մասամբ է կատարվել:

76. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ xv հանձնարարականը մասամբ է կատարվել:

Բոլոր կատեգորիաների անձանց առնչությամբ

Հանձնարարական xvi.

77. ԳՐԵԿՈ-ն առաջարկել է հետազայում մշակել պատգամավորների, դատավորների եւ դատախազների կողմից նվերներ ընդունելու նկատմամբ կիրառվող կանոններ, որպեսզի հնարավոր լինի տալ այնպիսի հստակ

սահմանումներ, որոնք կընդգրկեն ցանկացած օգուտ, այդ թվում՝ բնաիրային օգուտներն ու փոխկապակցված անձանց տրամադրվող օգուտները, ներմուծել ստացված նվերների մասին վերահսկողություն իրականացնող համապատասխան մարմին հայտնելու պահանջ, իսկ դատավորներին առնչվող հատուկ դեպքում՝ նվազեցնել գործող այն շեմերը, որոնց դեպքում պահանջվում է հայտնել նվերների մասին:

78. Իշխանությունները վկայակոչում են «Հանրային ծառայության մասին» օրենքում (ՀԾՕ) նախատեսված՝ նվերների ընդունման վերաբերյալ կարգավորումները (29-րդ հոդված): Ավելին, այս իրավական դաշտը բարելավելու նպատակով մշակվում են ՀԾՕ-ում կատարվելիք փոփոխություններ: Մասնավորապես, հանրային պաշտոն զբաղեցնող անձի ծառայողական պարտականությունների հետ կապված, որպես կանոն, նախատեսվում է ընդհանուր արգելք՝ եւ՛ նյութական, եւ՛ ոչ նյութական: Օրենքի նախագծով նաեւ սահմանվում են ծառայողական պարտականությունների հետ կապ չունեցող այն հանգամանքները, որոնց դեպքում կարելի է նվերներ ընդունել, այդպիսի նվերների արժեքի հետ կապված շեմերը, ինչպես նաեւ այդպիսի իրավիճակներում ապացուցման պարտականությունը: Նվերների ընդունման վերաբերյալ սահմանափակումները եւ պատասխանատվության համապատասխան միջոցները կիրառվում են նաեւ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ընտանիքի անդամների նկատմամբ: Օրենսդրական նախագծերով նաեւ նախատեսվում է նվերների մասին հայտնելու պահանջը եւ դրանց գրանցումը: Եւ վերջում, իշխանություններն ավելացնում են, որ Դատական օրենսգրքով (95-րդ հոդված), որոշ բացառություններով արգելվում է նվերների ընդունումը դատավորների կողմից (ինչպես նաեւ նրանց հետ համատեղ ապրող ընտանիքի անդամների կողմից): Դատական օրենսգրքով սահմանվում են նվերների արժեքի հետ կապված շեմերը, ինչպես նաեւ ստացված նվերների մասին էթիկայի եւ կարգապահական հարցերի

հանձնաժողովին հայտնելու եւ գույքի հայտարարագրերում դրանք արձանագրելու պահանջը:

79. ԳՐԵԿՈ-ն նշում է, որ ինչպես ՀԾՕ-ում, այնպես էլ Դատական օրենսգրքում դեռեւս առկա են մի շարք անորոշ եզրույթներ, որոնք արդեն նշվել են Գնահատման զեկույցում⁸: Սակայն ամեն դեպքում այն հաշվի է առնում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց առնչությամբ՝ նվերների արգելումը եւ (կամ) ընդունումը կարգավորող կանոնների շարունակվող բարեփոխումները: Նշված օրենքների նախագծերը Խորհրդարան չեն ներկայացվել: Սակայն ակնհայտ է, որ բարեփոխումը նպատակաուղղված է նվերների հետ կապված հարցերը կարգավորող իրավական դաշտի ամրապնդմանը, ինչը կարելի է միայն ողջունել: Կոռուպցիայի կանխարգելման ապագա հանձնաժողովը կոչված է վերահսկելու հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից նվերների մասով սահմանափակումների եւ անհամատեղելիության մասով պահանջների պահպանումը: ԳՐԵԿՈ-ն իշխանություններին խրախուսում է շարունակել այդ ջանքերը տվյալ հանձնարարականի լույսի ներքո, բայց դեռեւս վաղ է գնահատել նշված բարեփոխումների արդյունքները:

80. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ xvi հանձնարարականը չի կատարվել:

Հանձնարարական xvii.

81. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է հետազայում կատարելագործել պատգամավորների, դատավորների եւ դատախազների նկատմամբ կիրառվող՝ գույքի հայտարարագրերի գործող համակարգը՝ օրենքում սահմանելով հրապարակման ենթակա տվյալների ցանկը եւ բացառելով միայն այն*

⁸ Նվերի սահմանումը՝ որպես «ցանկացած գույքային առավելություն, որը ողջամտորեն չէր տրամադրվի դատավոր չհանդիսացող այլ անձի» կամ նվեր չհամարվող բացառություններ՝ «հրապարակային միջոցառումների ժամանակ սովորաբար տրվող նվերներ եւ պարգևներ» կամ «ազգականից կամ ընկերոջից ստացված նվերները, եթե նվերը էությամբ եւ չափով ողջամտորեն համապատասխանում է միմյանց միջեւ հարաբերությունների բնույթին»:

տվյալների հրապարակումը, որոնց գաղտնիության պահպանումն անհրաժեշտ է՝ անձնական կյանքի անձեռնմխելիության նկատառումներից ելնելով, եւ ընդլայնել հայտարարագրման համակարգի կիրառման շրջանակը, որպեսզի հնարավոր լինի ընդգրկել բոլոր դատախազներին:

82. Իշխանությունները վկայակոչում են «Հանրային ծառայության մասին» օրենքի (ՀԾՕ)՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ֆինանսական բացահայտման վերաբերյալ դրույթները, որոնցով մասնավորապես սահմանվում են գույքի այն տեսակները, որոնց մասին բարձրաստիճան պաշտոնատար անձանցից պահանջվում է հայտարարագիր ներկայացնել: Իշխանությունները նաեւ վկայակոչում են Կառավարության թիվ 2011 որոշումը, որով նախկինում սահմանափակումներ են սահմանվել բարձրաստիճան պաշտոնատար անձանց եւ նրանց հետ փոխկապակցված անձանց (ամուսին, նրանց հետ համատեղ ապրող ծնող, համատեղ ապրող չափահաս եւ չամուսնացած զավակ) գույքի հայտարարագրերի հրապարակման վերաբերյալ: Իշխանություններն ընդգծում են, որ սույն Որոշումը փոփոխվել է 2015 թվականին՝ հանելով այն մասով սահմանափակումները, թե ինչ պետք է հրապարակել թափանցիկությունը բարձրացնելու համար: Միայն անձնական տվյալներն են, որ ենթակա չեն հրապարակման: Իշխանությունները նաեւ նշում են, որ ընդլայնվել է հայտարարատուների շրջանակը՝ այժմ արդեն ընդգրկելով բոլոր դատախազներին⁹: Եւ վերջում, իշխանությունները պնդում են, որ հրապարակման ենթակա տվյալների ցանկը Կառավարության որոշմամբ կարգավորելը նախատեսվում է ՀԾՕ-ով եւ բավականին հստակ է եւ ճշգրիտ եւ չի խոչընդոտում իրականացումը:

83. ԳՐԵԿՈՒ-ի կողմից հաշվի են առնվում տրամադրված տեղեկությունները: Գույքի հայտարարագրերի տվյալներն այժմ ենթակա են ավելի մեծ

⁹ ՀԾՕ-ի՝ 2017 թվականի հունիսի 9-ին ընդունված փոփոխությունների արդյունքում հայտարարատուների թիվը 763-ից աճել է 3 184-ի:

թափանցիկության, ինչով փարատվում է հանձնարարականում նշված մտահոգություններից մեկը: Նաեւ ակնհայտ է, որ պահանջվելու է հայտարարագրել տվյալների ավելի լայն ցանկ, եւ բոլոր կատեգորիաների դատախազները պարտավոր են լինելու հայտարարագրել գույքը:

84. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ xvii հանձնարարականը կատարվել է բավարար չափով:

Հանձնարարական xviii.

85. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ապահովելու համար պարզամավորների, դատավորների եւ դատախազների նկատմամբ կիրառվող՝ գույքի հայտարարագրման վերաբերյալ կանոնների արդյունավետ հսկողությունը եւ կատարման ապահովումը՝ մասնավորապես ամրապնդելով Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործունեության անկախությունը, դրան վերապահելով ներկայացված հայտարարագրերը մանրակրկիտ կերպով ստուգելու, խախտումների դեպքերը ուսումնասիրելու, վարույթ հարուցելու եւ կանոնների խախտման դեպքում արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ պատասխանատվության միջոցներ կիրառելու հստակ մանդատ, լիազորություն եւ բավարար ռեսուրսներ:*

86. Իշխանությունները հայտնում են, որ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի համար ապահովվել է մուտքը մի քանի պետական մարմինների (իրավաբանական անձանց, անշարժ գույքի, տրանսպորտային միջոցների ռեգիստրեր եւ այլն) տվյալների էլեկտրոնային բազաներ: Էլեկտրոնային հայտարարագրման համակարգն այժմ միացված է տվյալների այդ բազաներին, եւ հայտարարագրերում պարունակվող տեղեկություններն ավտոմատ կերպով ստուգվում են:

87. Ավելին, իշխանությունները նշում են, որ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի ռեսուրսները եւ անձնակազմն ընդլայնվել են

««Հանրային ծառայության մասին» օրենքում (ՀԾՕ) փոփոխություններ կատարելու մասին» 2017 թվականի հուլիսի 1-ի օրենքն ուժի մեջ մտնելուց հետո¹⁰: Կառավարության որոշումը հաստատվելուց հետո¹¹ այս մարմնի կազմը լիարժեք համալրվեց եւ մինչեւ 2017 թվականի հոկտեմբերի սկիզբն արդեն իրականացնում էր իր գործառույթները: Այժմ Հանձնաժողովն ունի բյուջեով նախատեսվող առանձին տող եւ օրենքով սահմանված մեթոդաբանությամբ՝ գույքի հայտարարագրերը ստուգելու հստակ մանդատ: Ի լրումն դրան՝ գույքի հայտարարագրերի հետ կապված կարգավորումների խախտումների (տվյալներն ուշ ներկայացնելու, կեղծ տվյալներ ներկայացնելու դեպքեր եւ այլն) մասով սահմանվել են¹² վարչական պատասխանատվության միջոցներ: Ավելին, քրեական պատասխանատվության միջոցներ են սահմանվել¹³ հայտարարագրերը չներկայացնելու կամ կեղծ տվյալներ ներկայացնելու համար: Ի վերջո, ՀԾՕ-ում կատարված փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո Հանձնաժողովը վարչական վարույթ հարուցելու լիազորություն է ստացել:

88. Իշխանությունները կրկին նշում են, որ պետք է ստեղծել կոռուպցիայի կանխարգելման նոր մարմին՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, որը կփոխարինի Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին: Համապատասխան օրենքն ընդունվել է, բայց դեռեւս ուժի մեջ չի մտել, քանի որ դեռ պետք է հանձնակատարներ նշանակվեն: Ակնկալվում է, որ նոր հանձնաժողովը կլինի անկախ կառույց՝ համապատասխան անձնակազմով եւ իր սեփական բյուջեով: Նաեւ նախատեսվում է, որ կոռուպցիայի կանխարգելման ապագա մարմինը պատասխանատու կլինի հանրային պաշտոն զբաղեցնող բոլոր անձանց

¹⁰ ««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-98-Ն օրենք

¹¹ Կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 22-ի «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին բյուջետային միջոցներ հատկացնելու մասին» թիվ 900-Ա որոշում

¹² «Վարչական իրավախախտումների օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-106-Ն օրենք (հոդված 169.28)

¹³ 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-102-Ն օրենք, հոդվածներ 314.2 եւ 314.3

Ֆինանսական միջոցների վերաբերյալ տվյալների բացահայտման նկատմամբ հսկողություն իրականացնելու համար եւ լիազորված կլինի վարչական վարույթ հարուցել հայտարարագրման պարտականության խախտում թույլ տված պաշտոնատար անձանց նկատմամբ:

89. ԳՐԵԿՈ-ն հարկ է համարում նշել, որ միջոցներ են ձեռնարկվել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործունեության պայմանները բարելավելու ուղղությամբ, ինչպես, օրինակ՝ ապահովելով տարբեր տվյալների բազաների մատչելիությունը, ինչպես նաեւ ֆինանսական եւ կադրային անհրաժեշտ ռեսուրսներ: ԳՐԵԿՈ-ն ողջունում է այն քայլը, որ Հանձնաժողովը վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու լիազորություն է ստացել: Ավելին, ԳՐԵԿՈ-ն ողջունում է գույքի հայտարարագրերի վերաբերյալ կարգավորումների խախտումների մասով վարչական եւ քրեական պատասխանատվության միջոցների ներմուծումը: Ընդհանուր առմամբ, ձեռնարկված միջոցներով համապատասխան արձագանք է ապահովվում հանձնարարականում նշված խնդիրներին: Սակայն Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի գործող հանձնաժողովի գործառույթների փոխանցումը Կոռուպցիայի կանխարգելման ապագա հանձնաժողովին ցույց է տալիս, որ համակարգը դեռեւս անցումային փուլում է, եւ դրա արդյունավետությունը հնարավոր կլինի գնահատել միայն ավելի ուշ փուլում:

90. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ xviii հանձնարարականը մասամբ է կատարվել:

III. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

91. **Համաձայն վերոնշյալի՝ ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ Չորրորդ փուլի գնահատման զեկույցում ներառված տասնութ հանձնարարականներից հինգը Հայաստանը կատարել կամ դրանց անդրադարձել է բավարար**

չափով: Մնացած հանձնարարականներից տասներկուսը մասամբ են կատարվել, իսկ մեկը չի կատարվել:

92. Ավելի կոնկրետ՝ v, x, xii, xiii եւ xvii հանձնարարականներին բավարար չափով անդրադարձ է կատարվել, i-iv, vi-ix, xi, xiv, xv եւ xviii հանձնարարականները մասամբ են կատարվել, իսկ xvi հանձնարարականը չի կատարվել:
93. Պատգամավորների առնչությամբ ԳՐԵԿՈ-ն հարկ է համարում նշել, որ Խորհրդարանում օրենսդրական գործընթացի թափանցիկության եւ անհամատեղելիության վերաբերյալ չափանիշներ կիրառելու միջոցների մասով առաջընթաց է գրանցվել: Հետագա քայլեր են պահանջվում պատգամավորների համար վարքագծի կանոնագիրք մշակելու եւ էթիկայի նորմերին եւ չափանիշներին պատգամավորների համապատասխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար նախատեսված մեխանիզմն ամրապնդելու համար:
94. Ինչ վերաբերում է դատավորներին, ԳՐԵԿՈ-ն ողջունում է սահմանադրական այն փոփոխությունները, որոնց արդյունքում Բարձրագույն դատական խորհրդի ստեղծմամբ բարեփոխվել է դատական իշխանության ինքնակառավարման համակարգը: Ավելին, դատավորների անձեռնմխելիությունը սահմանափակվել է «գործառույթների իրականացման հետ կապված անձեռնմխելիությամբ»: Դատավորների պաշտոնների համալրման, առաջխաղացման եւ պաշտոնից ազատման եւ դատավորներին մեկ այլ դատարան գործուղելու ընթացակարգերի մասով գրանցվել է որոշակի առաջընթաց, որում Բարձրագույն դատական խորհուրդը կարելու էր դեր է ունեցել: Սակայն ակնկալվում է, որ կարվի ավելին դատավորների մասնագիտական վերապատրաստման եւ խորհրդատվության, ինչպես նաեւ դատավորների վրա ներգործելու կամ նրանց նկատմամբ հաշվեհարդար իրականացնելու նպատակով կարգապահական վարույթ հարուցելը կանխելու մասով երաշխիքների առումով: Դեռեւս անհրաժեշտ է սահմանել

անհարկի միջամտությունը բացառող արդյունավետ կանոններ: Դատախազների առնչությամբ ԳՐԵԿՈ-ն ողջունում է «Դատախազության մասին» օրենքի ընդունումը. կարելի է քայլեր են ձեռնարկվել դատախազների համալրման ընթացակարգերը եւ դատախազների էթիկայի հանձնաժողովի աշխատանքը բարելավելու նպատակով: Ավելի մեծ թվով միջոցառումներ են անհրաժեշտ՝ պարտադիր մասնագիտական վերապատրաստման եւ գաղտնի խորհրդատվության տրամադրման համակարգ ներմուծելու համար:

95. Համաձայն վերոնշյալի՝ ԳՐԵԿՈ-ն հարկ է համարում նշել, որ հետագայում անհրաժեշտ է զգալի առաջընթաց հաջորդող տասնութ ամիսների ընթացքում տվյալ հանձնարարականներին համապատասխանության ընդունելի մակարդակի հասնելու համար: ԳՐԵԿՈ-ն կոչ է անում Հայաստանի պատվիրակության ղեկավարին ամենաուշը մինչեւ 2019 թվականի հունիսի 30-ը լրացուցիչ տեղեկություններ տրամադրել i-iv, vi-ix եւ xi-xviii հանձնարարականների կատարման վերաբերյալ:

96. Ի վերջո, ԳՐԵԿՈ-ն կոչ է անում Հայաստանի իշխանություններին հնարավորինս շուտ թույլատրել զեկույցի հրապարակումը, այն թարգմանել պետական լեզվով եւ այդ թարգմանությունը դարձնել հանրության համար մատչելի: